| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|
| 26 | Փետրվար | 2019 թ. | | Ա | 0069850121 |
| [4] Մատակարարման ամսաթիվ | | | | Ճշգրտվող հաշվի | |
| 26 | Փետրվար | 2019 թ. | | Սերիա | Համար |
| | | | | | |
| | | | | Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |
| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար | | | |
| | | | | | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

| Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 1 5 0 3 4 4 8 |
| [9] Անվանումը | «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ |
| [10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 1 5 0 3 4 4 8 / 1 |
| [11] Բանկային տվյալները | Հայէկոնոմբանկ ԲԲԸ N 11500166513800 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2 |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

| Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 5 8 9 1 2 8 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ Պետական կառավարչական հիմնարկ |
| [17] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն N 900011474286 |
| [18] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ Վ. ՎԱՂԱՐՇՅԱՆ 13Ա |
| [19] Լրացուցիչ տվյալներ | |
| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն: |
| | Լիազորագիր — Համար: |
| | Լիազորագիր — Ամսաթիվ: |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (ժամանակը) | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումար | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | 18101118 դատահոգեբանական փորձաքննություն | հատ | 1 | 32833.33 | | 32833.33 | 20 | 6566.67 | 39400 |
| Ընդամենը | | | | | | 32833.33 | X | 6566.67 | 39400 |

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
անունը, ազգանունը

Ստացող
պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)
պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

26/02/2019 13:58:09

Որոշում
ամբուլատոր դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին

26 հունիսի 2018թ. ք. Գյումրի

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական՝ Ա.Տ.Մնոյանս, քննարկելով վարույթիս 18101118 քրեական գործի նյութերը,

Պարզեցի

2018 թվականի փետրվարի 13-ին՝ ժամը 03:50-ին, <<Գյումրի բժշկական կենտրոն>> ՓԲ ընկերությունից ՀՀ ոստիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժին ահազանգ է ստացվել, որ նույն օրը՝ ժամը 03:45-ին, <<որովայնի ծակած-կտրած թափանցող վերք, մեծ ճարպոնի վնասմամբ>> ախտորոշմամբ իրենց բուժօգնության է դիմել Գյումրի քաղաքի Նորավան թաղամասի 11-րդ շենքի 6-րդ բնակարանի բնակիչ, 01.10.1997 թվականին ծնված Արա Գրիշայի Ղայթանջյանը:

Ահազանգի առթիվ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում նախապատրաստվել են նյութեր:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ 2018 թվականի փետրվարի 13-ին՝ ժամը 01:30-ի սահմաններում, Արա Գրիշայի Ղայթանջյանը Մանիկ Սիմոնյանին պատկանող Գյումրի քաղաքի Պ.Սևակ փողոցի 13-րդ շենքի 67-րդ բնակարանի խոհանոցում խոհանոցային դանակով ինքն իրեն վնասել է:

Անհայտ անձի կողմից Արա Ղայթանջյանին ինքնասպանության փորձի հասցնելու դեպքի առթիվ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է 18101118 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Տուժողի դատավարական կարգավիճակում հարցաքննված Արա Գրիշայի Ղայթանջյանը ցուցմունք է տվել, որ 2018 թվականի փետրվարի 13-ի գիշերը գնացել է իր նշանածի տուն՝ վերջինին իր տուն տանելու համար, սակայն վերջինը հրաժարվել է գնալ իր տուն, իսկ ինքն էլ այդ հանգամանքից նյարդայնացել է և նյարդերը հանգստացնելու նպատակով խոհանոցային դանակով հարվածել իր որովայնին: Ինքնասպանություն կատարելու նպատակ կամ մտադրություն չի ունեցել, որևէ մեկը իրեն ինքնասպանության փորձի չի հասցրել կամ հակել:

Նկատի ունենալով, որ տուժող Արա Գրիշայի Ղայթանջյանի անհատական առանձնահատկությունները, ինտելեկտուալ մակարդակը և դեպքի ժամանակ վերջինի ունեցած հոգեվիճակը և գործով նշանակություն ունեցող այլ հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են դատահեգաբանության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով 55-րդ, 243-245-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով.

Որոշեցի

1, 18101118 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբանական փորձաքննություն, որի կատարումն հանձնարարել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի փորձագետներին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

2. Փորձագետների պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը.

-Արա Գրիշայի Ղայթանջյանի անհատական հոգեբանական առանձնահատկությունները կարող էին նպաստել նրա կողմից ինքնավնասում կամ ինքնասպանության փորձ կատարելուն:

-Ինչպիսին է Արա Գրիշայի Ղայթանջյանի ինտելեկտուալ անձնային զարգացման մակարդակը, վերջինի ինտելեկտուալ անձնային զարգացման մակարդակը կարող էր նպաստել նրա կողմից ինքնավնասում կամ ինքնասպանության փորձ կատարելուն:

-Դեպքի ժամանակ ինչպիսի հոգեվիճակում է գտնվել Արա Գրիշայի Ղայթանջյանը, նրա հոգեվիճակը կարող էր նպաստել ինքնավնասում կամ ինքնասպանության փորձ կատարելուն:

Փորձաքննության ընթացքում եթե կառաջանան այլ հարցեր, որոնք որոշմամբ չեն առաջադրվել, սակայն դրանց պատասխանը մտնում է փորձագետների իրավասության մեջ ու դրանց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար՝ խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

2. Փորձագետների միջնորդությամբ փորձաքննությանը ներկայացնել Արա Գրիշայի Ղայթանջյանին և 18101118 քրեական գործի նյութերը:

ՀԿԳ ավագ քննիչ՝ Ա.Տ.Մնոյան